զանազան ձեվի իրեր: Չուլարանը դորդում է հնոցների ուժեղ ձայնից: Չուլարանում բանվորներն աշխատում են քրանքի մեջ լողալով: Մեր ձուլարանները լավ են սարքավորված:

16. Կարգացեք և փակագծերում դրած դոյականներն իմաստի համապատասխան հորովեցեք:

Վ ա Ր Ժ ու Թ յ ու ն ն ե Ր


Մենք սովորում ենք յերրորդ ... (դասարան): Մեր ... (դասարան) բոլոր աշակերտներն ունեն պայմանագրեր: Մեր ... (դասարան) գոհ են բոլոր դասատուները: Մյուս դասարաններն որինակ են վերցնում մեր ... (դասարան): Մենք պարծենում ենք մեր ... (դասարան): Աշկումը և դպրոցի վարչութիւնը մեր ... (դասարան) բարձրացնելու յեն կարմիր տախտակին: Մեր հասարակագիտութեան ... (ուսուցչունի) ազգանունն է Արամյան: Նա մեզ մոտ է յեկել ... (Մարտունի): ... (Թվաբանութիւն) դասերին շատ խնդիրներ ենք լուծում: ... (Թվաբանութիւն) ամենից ուժեղն է Մատինյանը: Մայիսը ... (գարուն) ամիս է, իսկ հոկտեմբերը՝ ... (աշուն): Հունվարը ... (ձմեռ) ամիս է, իսկ հուլիսը՝ ... (ամառ): Յես իմ ... (ուսուցիչ) նամակ ստացա: Հայոց լեզվի ուսուցիչը տետրակները բաժանեց ... (աշակերտներ): Պիտներական կոլեկտիվի խորհուրդը պարգեւատրեց լավագույն ... (պիտներներ): Յուցահանդեսի ... (բացում) հանդեսը շատ լավ անցավ: Կոլտնտեսութեան ... (այգի) բերքը շատ է բարձրացել: ... (կատու) խաղ է, ... (մուկ) մահ է: Արամը ... (Բագու) սովառնակով

թուել է Թիֆլիսի Հայտնի յեն ... (Դավալու) ցեմենտը, ... (Ղամարլու) զինին, ... (Ղուրգուղուլի) բամբակը: Շատ մեծ է ... (ռադիո) և ... (կինո) նշանակութիւնը: Ճուտիկը դուրս յեկավ ... (ձու):

IV. Ա. Ծ Ա. Կ Ա. Ն

1. Արտագրեցեք միայն խոտակեր, կենդանիների անունները վորպիսութիւնն ցւոյց տվող բառերի հետ միասին.

ԸՆՏՄՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ



Խելոք ձի: Կաթնատու կով: Ազան խոզ: Հիմար վոշխար:



Հավատարմ շուն: Խորամանկ կատու: Ճարպիկ այծ: Համառ եղ:

2. Արտագրեցեք ընդգծված գոյականները վորպի-
տեթյուն ցույց տվող լրացումներով.

Կեցցեք մաքրությունը

Կեցցենս, կեցցենս,	են խոր սաւսում,
հոտով սապոն,	մեծ տախտակում,
կեցցենս, փափուկ	վազան ջրում,
յերեսաբրիչ,	գետում, ծովում,
դու առամի	տաք բաղնիքում.
փոշի մանր,	ձեզ եմ ասում.
և դու գլխի	միշտ ել գովենք
սիրուն սանր:	ջուրը, ջուրը՝
Յեկեք ծափ տանք,	ջուրն ե մաքրում
լողանք, լող տանք	կեղտն ու մուրը:

ՈՐԻՆԱԿ

Խնչպիսի յերեսաբրիչ — փափուկ յերեսաբրիչ:

Առարկայի վորպիսությունը կամ հատկու-
թյունը (գույնը, համը, ձեւը, նյութը) ցույց
տվող բառը կոչվում ե ածական:

Ածականը պատասխանում ե Ի՞նչպիսի
հարցին և նախադասության մեջ լինում ե
լրացում:

3. Տրված ածականներով վորոշեցեք գոյականները,
վորոնց վերաբերում են ասված հատկությունները.

ԵՆ ԲՆ ՀՆ Ե, ԲՆ ՀԸ

Սպիտակ, փափուկ, սառն...
Հաջան, կծան, հափառարիմ...
Գեղեցիկ, անուշահոտ, կարմիր, փշոտ...
Կանաչ, տերեվախիտ, բազմաճյուղ, ճկուն
սովերաշատ...

4. Գոյականների մոտ դրեք հարմար ածականներ.

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆՆԵՐ



Վախկոտ նապաստակ

... գայլ

... արջ

... աղվես

5. Գոյականների մոտ դրեք հարմար ածականներ.
մի առարկային կարող եք տալ մի քանի հատկու-
թյուններ.

Խնչպե՞ս են լինում առարկաները

Աշխատասեր մրջյուն

... կրիա

... աշակերտ

... մեղր

... ածուխ

... քաջալի

... դրոշ

... բաժակ

... ձյուն	... կիտրոն
... շուշան	... մանուշակ
... պղպեղ	... արեւի
... շաքար	... պնակ

6. Կարդացե՛ք՝ կետերի տեղ հարցերին համապատասխան ածականներ դնելով:

Գարունը յեկավ

... (խնչպիսի) գարունը յեկավ: ... (խնչպիսի) արեւը փայլում է: ... (խնչպիսի) առուն է խոխոջում: ... (խնչպիսի) խոտը յերեմաց: ... (խնչպիսի) բողբոջներն արձակվեցին: ... (խնչպիսի) ծաղիկները ծաղկեցին: ... (խնչպիսի) թռչունները թռչում են: Նրանց ... (խնչպիսի) ձայները լսվում են: ... (խնչպիսի) արոտում կովերն արածում են:

7. Արագրեցե՛ք՝ կետերի տեղ հարմար ածականներ դնելով:

Յերեխաները պուրակում

... առավոտ եր: ... յերկնքում չեր յերեւում փոշ մի ամպ: Կիման և Կամոն վաղ վեր կացան և ուղեվորվեցին դեպի ... պուրակը: Ինչ լսվ եր պուրակում: ... խոտը փայլում էր ցողի կաթիլներից: ... թռչունները յերգում էին: ... շուշանները և ... մանուշակները ծաղկել էին:

Յերեխաները մորի էյին վորոնում: Բայց ... հատապտուղ դեռ չկար: Մորենին դեռ չեր ծաղկել:

Հարցեր

1. Վճիռ շարադրութունն է ավելի լիվ, հասկանալի և հետաքրքրական՝ ածականներով, քե՞տ առանց ածականների:
2. Ուրեմն ինչի՞ համար են գործածվում ածականները:

8. Ի՞նչ բառեր պիտի ավելացնել հետեւյալ հոդվածի նախադասությունների մեջ, վոր միաքո ծիշտ արտահայտվի, գտե՛ք այդ ածականները և կարդացե՛ք ածականներով:

Կարմիր բանակի ուր

Փետրվարի 23-ին կատարեցին բանակի տարեդարձը: Իւոր տեղերում ծածանվում էին դրոշակները: Փողոցներով անցնում էին ավտոմոբիլներ: Նրանք զարդարված էին լողունգներով:

9. Ածականների մոտ դրե՛ք հարմար գոյականներ:

Խնչպե՛ս են լինում առարկաները

Սպիտակ շուշան	Սառն	...
Սեւ	Պայծառ	...
Կապույտ	Հարվածային	...
Դեղին	Քաղցր	...
Կարմիր	Կծու	...

10. Կարդացե՛ք՝ յերեք կետերի տեղ հականիշ ածականներ դնելով:

Առաջ և հիմա

Առաջ բանվորներն ապրում էին խոնավ, մութ և ցուրտ բնակարաններում: Այժմ մեզ մոտ խորհրդային իշխանությունը բանվորներին ապրանքներ ... , ... և ... բնակարաններ:

11. Առաջեր հակառիշ ամականներ:

Հակառիշ ամականներ

Հաստ	— բարակ	հեռու	— . . .
նոր	— . . .	առողջ	— . . .
գեղեցիկ	— . . .	ծուլ	— . . .
նեղ	— . . .	լույս	— . . .
արագ	— . . .	բութ	— . . .
մաքուր	— . . .	հեղուկ	— . . .

12. Լրացրեք և գրի առեք:

Հակառիշ ամականներ

մեծ	— փոքր	խոշոր	— . . .
լավ	— . . .	տխուր	— . . .
բարձր	— . . .	թանգ	— . . .
յերկար	— . . .	սառն	— . . .

13. Առաջեր՝ ինչպիսի խոտ և լինում:

Ինչպիսի խոտ և լինում

նայած անման տեղին (ճահճային...),

գույնին (կանաչ...),

հասակին (բարձր...),

դորձվածքի նմանությանը (մետաքսե...),

քամուց շարժվելուն (որորովոր...),

հանած ձայնին (շշնջացող...),

հոտին (բուրավետ...),

հյութալիությանը (չոր...),

տարվա յեղանակներին և տարիքին (գարնանային, հերթա...):

14. Սրտագրեցեք և ամականներն ընդգծեցեք:

Կենսատու անձրեվը

Պայծառ յերկնակամարի վրա գորշագույն ամպեր յերեվացին: Ամպերը թանձրացան և սեփ կեղևով ծածկեցին կապույտ յերկինքը: Յերեկոյան կենսատու անձրեվը ջրեց ծարավ յերկիրը: Դաշտային թառամած բույսերը գվարթացան նրանք իրենց բարակ արմատներով խոնավ հողից գուրտ ծծեցին սննդարար հյութը: Ծառերի փայլուն տերևներն ազահաբար ներս ծծեցին խոնավ ողը: Յորենի և գարու արտերն իրենց բարձր հասկերի նիհար հատիկները լցրին, կշտացրին:

15. Ինչ ստարիկների չի կարելի տալ հետևյալ հատկությունները:

Փխրուն, դյուրամառ, հոտավետ, տափակ, ոգ-
տակար:

16. Ի՞նչ հատկութիւններ չի կարելի տալ հետեւյալ
գոյականներին.

Արեւի, ածուխ, դայի, նապաստակ, կրակ, շա-
քար, ոճ:

17. Ածականներն ընդգծեցեք.

Անձրեւային աշուն.	Փոթորկալի ծով.
աշնանային անձրեւի:	ծովային փոթորիկ:
Դաշտային ծաղիկ.	Հարվածային բանփոր.
ծաղկավետ դաշտ:	բանփորական հարված:

18. Արտադրեցեք և բնորոշեցեք ածականները մեկ
գծով, իսկ ալն գոյականները, փորոնց վերաբերում են
ընդգծված ածականները՝ յերկու գծով.

Վ ա Ր Ժ ու Թ յ ու ն ն ե Ր

Յես ունեմ մի լավ պայուսակ: Այդ լավ պա-
յուսակին տվել եմ յերկու ուրբի: Այդ լավ պա-
յուսակից շատ դոն եմ: Իմ լավ պայուսակով յես
պարծենում եմ: Այդ լավ պայուսակում պահում
եմ գրքերս:

Մեր խմբի աշակերտները լավ պայուսակներ
ունեն. նրանք լավ պայուսակների մեջ պահում
են իրենց գրքերը:

19. Արտադրեցեք բոլոր տեսակի ածականները.

Վ ա Ր Ժ ու Թ յ ու ն ն ե Ր

Յես ունեմ սեւ, կարմիր և կապույտ մատիտ-
ներ: Կարմիրներին ձեռք չեմ տվել, իսկ կապույտ-
ներից մեկը տվել եմ Զինիկին: Յես ամենից շատ
սեւով եմ գրում. կարմրով ու կապույտով նկա-
րում եմ: Այսօր կարմիր մատիտով վարդ նկա-
րեցի, իսկ կապույտ մատիտով՝ մանուշակ:

Հարցեր

1. Յճրբ են ածականները հոլովում, լերբ չեն հոլովում:
2. Ի՞նչպես են հոլովում ածականները.

Ածականը, յերբ գործ է ածվում գոյակա-
նի հետ, անփոփոխ է մնում՝ չի հոլովում:

Ածականը, յերբ գործ է ածվում առանց
գոյականի, փոփոխվում է՝ հոլովվում և գոյա-
կանի նման, ընդունելով փոքրոշոգ հոգ:

20. Հոլովեցեք հետեւյալ գոյականները՝ իրենց վրա
դրված ածականներով.

Կարմիր դրոշ, պայծառ արեւ, քաղցր շաքար,
խորամանկ աղվես:

Յ Ե Ղ ա Կ Ի

Ուղղ. և հայց.	վախկոտ նապաստակ
Սեռ. և sr.	վախկոտ նապաստակի
Բաց.	վախկոտ նապաստակից
Գործ.	վախկոտ նապաստակով
Ներգ.	վախկոտ նապաստակի մեջ

Հ Ո Ղ ն ա Կ Ի

Ուղղ. և հայց.	վախկոտ նապաստակներ
Սեռ. և sr.	վախկոտ նապաստակների
Բաց.	վախկոտ նապաստակներից
Գործ.	վախկոտ նապաստակներով
Ներգ.	վախկոտ նապաստակների մեջ

21. Հոլովեցեք մենակ գործածվող ածականներ.

Յ Ե Ղ ա Կ Ի

Հ Ո Ղ ն ա Կ Ի

Ուղղ. և հայց.	լավը	լավերը
Սեռ.	լավի	լավերի
Sr.	լավի (ն)	լավերի (ն)
Բաց.	լավից	լավերից
Գործ.	լավով	լավերով
Ներգ.	լավի մեջ	լավերի մեջ

22. Կարմեցեք նախադասություններ, վորոնց մեջ առաջավոր սովորող բառերը գործածված լինեն բոլոր հոլովներով:

23. Հոլովեցեք առաջադեմը ածականն առանց գոյականի և գործածեցեք նախադասություններ ի մեջ:

24. Արտագրեցեք.

Սեպ ծով, Կարմիր ծով, Փոքր-Ղարաքիլիսա, Նոր-Բայազետ:

Այն ածականները, վորոնք գոյականների հետ միասին կազմում են հատուկ անուն, սկսվում են մեծատառով:

25. Հոլովեցեք ընդգծված ածականները գոյականների հետ միասին.

Կապույտ գլխով, կանաչ վոսով,
յես ծաղիկ եմ անուշ հոտով:

V. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1. Կարգացեք նախադասությունները ձախ և աջ սյունակներում. ինչ տարբերություն կա նրանց մեջ. աջ սյունակում Արամ բառի տեղ ինչ բառ է գործածված:

Արամը հարվածալին է:		Արամը հարվածալին է:
Արամը լավ է սովորում:		Նա լավ է սովորում:

2. Արտադրեցեք ընդդժմած բառերը. նրանք ի՞նչ բառերի տեղ են զրկած.

Վեր խմբի
գրավոր աշխատանքները

— Երան, չեռագիրդ լավացրել ես, բայց դու փչ ես ուղադրությանը դարչնում անսխալ գրելու վրա. չես աչծն արագգրության Տեղ փոշ մի սխալ չեմ անում: Ժայերենի Տեղ ամենից ուժեղը Զարուհին է. նաև գեղեցիկ շարադրություններ ե գրում: Վե՛նե՛ք բոլորս պետք է լավացնենք մեր գրավորները. III խումբը մեծ առաջադիմություն ունի գրավոր աշխատանքների Տեղ. նրանք մեզ առում են. «Գրավոր աշխատանքների մեզ դու՛ք հարկաճային չե՛ք»:

Յես, դու, նա, մենք, դուք. նրանք զրկած են անձի անվան տեղ և կոչվում են անձնական դերանուններ:

Անձնական դերանունների թիվը կախված է այն անունից, վորի տեղ զրկում են:

Յես, մենք — առա ին դեմքի դերանուն են:

Դու, դուք — յերկրորդ դեմքի դերանուն են:

Նա, նրանք — յերրորդ դեմքի դերանուն են:

Առաջին դեմք զրկում է խոսող անձի տեղ: Յերկրորդ դեմք զրկում է խոսակից անձի տեղ:

Յերրորդ դեմք զրկում է վոչ խոսող և վոչ խոսակից անձի տեղ:

3. Նախորդ դասից արտադրված անձնական դերանունների վերեվը զրեցեք նրանց դեմքը և թիվը. որինակ՝

II դ. յեզ. I դ. հոգն.

դու , մենք:

4. Փակագծերում արված դերանունները զրեք պահանջված հոլովով.

(Յես, դու և նա) զնահատականները լավն են
(Յես, դու և նա) գրքեր նվիրեցին: (Յես, դու և նա) սիրում են բոլոր ուսուցիչները: (Յես, դու և նա) որինակ են վերցնում: (Յես, դու և նա) պարծենում են: (Յես, դու և նա) մեծ փոփոխություն է կատարվել:

Իմ, քո և նրա գնահատականները լավն են:

Անձնական դերանունների
հոլովումը

	Յեզ.	Հոգն.
Ուղղ.	յես	մենք
Սեռ.	իմ	մեր
Տր. և հայց.	իմն	մեզ
Բաց.	ինձնից	մեզնից
Գործ.	ինձնով	մեզնով
Ներգ.	ինձնում	մեզնում

	Յեզ.	Հոգն.
Ուղղ.	դու	դուք
Սեռ.	ին	ձեր
Տր. և հայց.	ինք	ձեզ
Բաց.	քեզնից	ձեզնից
Գործ.	քեզնով	ձեզնով
Ներգ.	քեզնում	ձեզնում

	Յեզ.	Հոգն.
Ուղղ.	նա	նրանք
Սեռ.	նրա	նրանց
Տր. և հայց.	նրան	նրանց
Բաց.	նրանից	նրանցից
Գործ.	նրանով	նրանցով
Ներգ.	նրանում	նրանցում

Դերանունները մեծ մասամբ հոլովում են զոյականների պես. առանձին ձեվեր ունեն սեռականը, տրականը և հայցականը: Անձնական դերանունների մեջ հայցական հոլովը նման է տրական հոլովին:


5. Կետերի տեղ դրեք անձնական դերանուններ՝ պահանջված հոլովով.

Վարժույթ յուզներ

... պայմանագիր եմ կնքում: ... մրցման ես հրավիրում: ... բուքսիքի յե վերջնում թույլերին: ... պարապում ենք ընթերցանությամբ: ... ստանում եք «Հոկտեմբերիկ»: ... թղթակցում են տատի լրագրին: ... համար թատրոնի տոմս առա: ... պես լավ վոչ վոք չի հերթապահում: ... Արամն ... հետ յեկավ ժողով: Առանց ... կինո չենք գնա:

6. Նկարագրեցեք.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԵՆՅԱԿՈՒՄ



7. Պատմեցեք ձեր կարդացած գրքերից փորելե մեկի համառոտ բովանդակութիւնը.

1. Ի՞նչ ե գրքի անունը և ո՞վ ե հեղինակը.
2. Ի՞նչպիսի գրվածք ե.
3. Ինչի՞ մասին ե պատմվում.
4. Հավանեցի՞ք, թե՞ փոչ ինչո՞ւ.

8. Արտադարոցական ընթերցանության համար մի առանձին ծոցատետր (սովորական տետրի կիսի չափով) պահեցեք և նրա մեջ գրեցեք ձեր կարդացած գրքերի մասին հետեւյալ ձևով.

Յէ՞րբ եմ կարդացել.—

Ո՞վ ե գրել՝ հեղինակը (կազմողը, թարգմանիչը, փոխադրողը).—

Գրքի անունը (ի՞նչպե՞ս ե կոչվում).—

Ո՞վ ե հրատարակել (հրատարակչութիւնը).—

Վերտեղ և վեր թվին ե հրատարակվել (տպում գրվել).—

Վեր տպագրութիւնն ե (հրատարակութիւնը).—

Քանի՞ որինակ ե տպվել (տպում).—

Քանի՞ եջ ե.—

Գինը.—

Ի՞նչպիսի գրվածք ե (պատմվածք, հեքիաթ, բնագիտական զրույց).—

Իբի առաջինին կարելի չե ծանոթանալ գրքի շարքով կամ ամբողջ մանրամասն շարքից հետո յեկող առաջին թերթով՝ անվանաթերթով, փորտեղ տպված են լինում՝ հեղինակի և գրքի անունը, հրատարակչութիւնը, տպագրութեան տեղը և ժամանակը, փորերորդ տպագրութիւնն լինելը, ինչպիսի գրվածք լինելը և այլն: Տիրաժն իմացվում ե անվանաթերթի յերկրորդ եջից, իսկ գինը՝ շարքի վերջին եջից:

9. Ծանոթացեք ձեր դասարանի հասարակագիտութեան, աշխարհագրութեան, բնագիտութեան, թվարանութեան և հայոց լեզվի դասագրքերի արտաքինին և պատասխանեցեք նախորդ դասի հարցերին:

10. Ծանոթացեք ձեր խմբի դասագրքերում յեղած առաջարանին և ցանկին կամ բովանդակութեանը և պատասխանեցեք.

1) հեղինակը կամ հրատարակչութիւնն ո՞ւմ համար և ի՞նչ նպատակով են գրել առաջարանը. 2) բոլոր դասագրքերն առաջարան ունե՞ն. 3) ցանկով կարելի՞ չե ծանոթանալ դասագրքի բովանդակութեան և սղանին. 4) ել ի՞նչ կարելի չե իմանալ ցանկից:

1. Նկարների կարգով գրեցեք՝ ի՞նչ ե անում յուրաքանչյուրը:

(գրում ե, կարդում ե)



2. Գործողություններից խմացեք յենթական և կարգալիս յենթական գրեք յերեք կետերի տեղ:

Վճիռ առարկան ի՞նչ ե անում կամ ի՞նչ ե լինում

Կոլտնտեսականը վարում ե, տափանում ե, ցանում ե, հնձում ե:

... կարդում ե, գրում ե, հաշվում ե, նկարում ե:

... ծլում ե, կանաչում ե, ծաղկում ե, հասնում ե:

... կարում ե, ձեփում ե, կարկատում ե, արգուկում ե:

3. Արտագրելիս ընդգծեցեք ա՛յն բառերը, վորոնք ցույց են տալիս՝ ի՞նչ ե անում լենթական.

Ագռավը կռավում ե: Ոձը սուլում ե: Բղեղը բղղում ե: Փայտփորը թխկթխկացնում ե: Դայլը վռոնում ե: Արջը մրթմրթում ե: Տերեւները խըշխըշում են:

4. Կարգալիս կետերի տեղ ավելացրեք մտքով հարմար բառեր, վորոնք արտահայտում են, թե ի՞նչ ե լինում առարկան.

Ջուրը ... Գետը ... Ելեկտրականությունը ...
Սպիտակեղենը ... Վառարանը ... Ամպը ...

(խսանում ե, վարաում ե, վառվում ե, լվացվում ե, հանգում ե, զոլորեխանում ե)

Այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե ի՞նչ ե արվում կամ ի՞նչ ե լինում, կոչվում են բայ:

5. Արտագրեցեք բայերը:

Պ ի ո ն ե ր ն ե ր ը

Պիոները դպրոցում պայքարում ե վորակի և զիտակցական կարգապահության համար:

Պիոները դպրոցում հանգիստանում ե սոցմրցման և հարվածայնության նախաձեռնողը:

Պիոներները բոլոր սովորողներին ներգրա-

վում են հասարակական աշխատանքներում, ինչ-
պես դպրոցում, նույնպես և դպրոցից դուրս:

6. Արտադրեցեք և ընդդժեցեք բայերը.

Յերեխաների վեճը

Շողիկն ասավ.

— Գարնանը գիշերները կարճանում են:

Վարդանն ասավ.

— Վհչ, ի՞նչ ես ասում, գարնանը ցերեկները
յերկարում են:

Պապը լսեց նրանց վեճը, ծիծաղեց ու ասավ.

— Բալիկներս, մի լավ մտածեցեք, թե ինչ
եք ասում:

Շողիկն ու Վարդանը մտածեցին, մտածեցին
և իրենք ել ծիծաղեցին իրենց վրա:

7. Արտադրեցեք բայերը.

Արեվածադը

Ծագում է մանուկ արեվը գարնան

կովկաս լեռների ձյունի պատհեղից,

զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
ձմռան սնվրդով քնի մշուշից:

Ահա Լավարի վեթիարի ուսին

բազմում է արեվը թարմացած ուժով,

սարեր ու ձորեր իրար յերեսին

նայում են, ժպտում ամպի մշուշով:

8. Այս հոդվածի մեջ ցույց տվեք բաժերը.

Վո՞ր կենդանիներն ի՞նչպես են
պաշտպանվում ցրտից

Ձմռան ցրտին վոչխարները խմբվում են դո-
մերում, կողքերն իրար կպցնում, շնչում են,
փնչում, տաքանում, քնում:

Հափն ել մեկ մի վոտը, մեկ մյուս վոտը սեղ-
մում է փորին, կախում է թեփերն ու ցրտից
պաշտպանվում:

Շունը շարժում է իր մկանները և այնպես
տաքանում:

Իսկ կատուն կծկվում է մի աեղ, վոտները
ծալում, իր տակն է անում, պոչն ել բերում է
փորովը պատ տալիս ու այնպես տաքանում:

Այսպես ահա ամեն մեկը մի կերպ գարուն է
հասնում:

9. Ծանոթացեք «Պիոներ կանչ» թերթին, «Հոկտեմբե-
րիկ» ամսագրին և պատասխանեցեք հետևյալ հարցերին.

Ի՞նչպիսի թերթ է «Պիոներ կանչ»-ը:

Ել ի՞նչպիսի թերթեր գիտեք:

Ի՞նչպիսի ամսագիր է «Հոկտեմբերիկ»-ը:

Ո՞վ է հրատարակում «Պիոներ կանչ»-ը:

Ի՞նչպիսի բաժիններ է ունենում այդ թերթը:

«Պիոներ կանչ»-ի վո՞ր նյութերն են հավանե-
լիք:

ԲԱՅԻ ԴԵՄՔԸ ՏԵՎ ԹԻՎԸ

(Յենթադասի և ստորագրալի համաձայնությունը
դեմքով և թվով)

1. Յերեք կետերի տեղ դրեք բայը՝ վերցնելով ներքեվում տրված բառերից.

Բանվորը, կոլտնտեսականը և աշակերտը

Բանվորը կոլտնտեսականին ասում է. «Յես բարեկամ եմ ապրանքը, դու բարձրացնում ես բերքը, իսկ նա (աշակերտը) պայքարում է ուսման համար:

Աշակերտը բանվորին ասում է. «Յես ... ուսման համար, դու ... ապրանքը, իսկ նա (կոլտնտեսականը) ... բերքը:

Կոլտնտեսականն աշակերտին ասում է. «Յես ... բերքը, դու ... ուսման համար, իսկ նա (բանվորը) ... ապրանքը:

Յես բարեկամ եմ:	Յես բարձրացնում եմ:
Դու բարեկամ ես:	Դու բարձրացնում ես:
Նա բարեկամ է:	Նա բարձրացնում է:

Յես պայքարում եմ:
Դու պայքարում ես:
Նա պայքարում է:

2. Նախորդ դասը փոփոխեցեք այսպես: յես, դու, նա դերանունները դրեք հոգնակի թվով (մեկ, դու, նա), իսկ յերեք կետերի տեղ վերցրեք բայեր հետևյալ սյունակներից.

Մենք բարեկամ եմ:
Դուք բարեկամ եք.
Նրանք բարեկամ են:

Մենք բարձրացնում եմ:
Դուք բարձրացնում եք.
Նրանք բարձրացնում են:

Մենք պայքարում եմ:
Դուք պայքարում եք.
Նրանք պայքարում են:

3. Լրացրեք և գրի առեք.

Բայի հոգնակի թիվը

I դեմ

II դեմ

III դեմ



Մենք
կարդում ենք

Դուք

Նրանք

...

...

Յերեք բայը գրվում է առաջին, յերկրորդ և յերրորդ դեմքի դերանունների հետ՝ նրա վերջավորութունը փոփոխվում է:

Բայի փոփոխումը կոչվում է խոնարհում:

Բայն ունի յերեք դեմք և յերկու թիվ:

Բայերի դեմքն ու թիվը համապատասխանում են նրանց հետ գրվող անձնական դերանուններին և նրանց թվին:

4. Լրացրեք և գրի առեք.

Ընտանի ենդանիների ձայները

Կովը բառաչում է:	Կատուն . . .
Ձին . . .	Այծը . . .
Շունը . . .	Վոչխարը . . .

Հարցեր

1. Ի՞նչ թվով և դրված լենթական:
2. Իսկ ի՞նչ թվով և դրված ստորոգյալը:

5. Վերելի նախադասությունները կարդացե՛ք՝ յեզակի յենթակաները հոգնակի դարձնելով:

ՈՐԻՆԱԿ

Կովերը բառաչում են: Վոչխարները մայում են:

6. Լրացրեք և ապա գրի առեք.

Ի՞նչպես են շարժվում

Ձկները լողում են: Ոձերը . . . Կովերը . . .
Ծիծեռնակները . . . Նապաստակները . . .

7. Հոգնակի յենթակաները յեզակի դարձրե՛ք համապատասխան կերպով փոփոխելով ստորոգյալները.

ՈՐԻՆԱԿ

Ձուկը լողում է: Ծիծեռնակը թռչում է:

Յենթական և ստորոգյալը թվով իրար համաձայն են դրվում: յեզակի յենթակայի հետ յեզակի ստորոգյալ է դրվում, հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ:

8. Շարադրության մեջ յես յենթական փոխարինեցե՛ք դու յենթակայով և դրա համապատասխան փոփոխեցե՛ք ստորոգյալները յուրաքանչյուր նախադասության մեջ: Ձեր շարադրությունը վերնագրեցե՛ք «Ի՞նչպես ես դու անցկացնում եմ»:

ԻՆՉՊԵՍ ԵՄ ՅԵՍ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՈՐՍ



Առավոտյան յես արթնանում եմ, հագնվում եմ, կոշիկներս մաքրում եմ, լվացվում եմ, սանրվում եմ, նախաճաշում եմ, հավաքում եմ զբքերս և գնում եմ դպրոց: Իսկ յերեկոյան պատրաստում եմ դասերս, կարդում եմ «Պիտեք կանչ», գրում եմ ուղերս, ընթրում եմ, հանվում եմ, պառկում եմ և քնում եմ:

9. Կարգալիս յես յենթական փոխարինեցեք նա դե-
րանունով և դրա համապատասխան փոփոխեցեք ստորո-
գյալները յուրաքանչյուր նախադասության մեջ.

Յես մտնում եմ կոլտնտեսություն

Յես թողնում եմ անհատական տնտեսություն-
ներ և մտնում եմ կոլտնտեսություն: Այնտեղ յես
մշակում եմ հողը մեքենաներով, պայքարում եմ
անասնապահության բարելավման համար, ու-
սումնասիրում եմ տնտեսության կանոնավոր դըր-
վածքը, ամեն կերպ ոժտնդակում եմ հնգամյակի
կատարման: Յես հաճախում եմ բոլոր հասարա-
կական ժողովները, մասնակցություն եմ ունենում
կոոպերատիվի աշխատանքում:

Յենթական և ստորոգյալը դեմքով նույն-
պես իրար համաձայն են գրվում. ինչ դեմքի
դերանուն գրվում է յենթակայի համար՝ դրան
համապատասխան դեմքով ել գրվում է ստո-
րոգյալը:

10. Արտագրեցեք և բայերի դեմքն ու թիվը գրե-
ցեք վերելը.

Ք ա մ ի

Քամի, քամի, դու ահեղ,
են յիբկնքի ամպերը
հալածում ես ամեն տեղ,
ալեկոծում ծովերը

ու տարածում սար ու ձոր
քո անուշիկ հովերը:

Գ ա ռ ն ա ն ա մ ի ս ն ե ռ ը

Մարտը տալիս է ձնծաղիկ,
ապրիլը՝ կապույտ մանուշակ,
մայիսին բացվում է վարդը,
սոխակ յերգում անուշակ:

11. Հետեվյալ նախադասությունների մեջ ցույց տվեք
բայերի դեմքերը և հետո մյուս դեմքերի փոխեցեք.

Ս ա ու ա յ ի խ ա դ ը

Առնում է գնդակը, զարկում է գետնին.
Թռչում է գնդակը, բռնում է կրկին.
և ամեն անգամ պտույտ է գալիս
գնդակը կրկին գետնին և տալիս:
Պտույտ է գալիս, թռչում, թռչկոտում,
մի քանի շրջան խաղ է բոլորում:

ԲՍՏԻ ՓՍՄԱՆԱԿՆԵՐԸ՝ ՆԵՐԿԱ, ԱՆՑՑԱԼ
ՅԵՎ ԱՊԱՌՆԻ

1. Արտագրեցեք հակառիշ բայերի հետ միասին.

սկսում եմ —	վերջաց- նում եմ	կապում ե —	...
զալիս եմ —	...	բարձրացնում ենք —	...
մոռանում ես —	...	մոտեցնում եք —	...
տալիս ես —	...	լռում են —	...

2. Արտագրեցեք բայերը. յերբ են կատարվում վտան-
 անավորի մեջ բայերի ցույց տրված գործողութիւնները.

Գործարան

Քիթը ցցած փնչում ե նա,
 արձակում ե ծուխ ու կրակ,
 հոշոտում են կարծես իրար
 հազար առյուծ եղ հարկի տակ:
 Դղրդում ե շենքն իր ուժից,
 բայց այդ հրի, մրի միջից
 դուրս ե գալիս խոփ ու կացին,
 սուր գերանդի, վարող դուժման:

3. Բանավոր պատասխանեցե՛ք՝ ի՞նչ ե անում յու-
 րաքանչուր յերեխան:



Յեթե բայի ցույց տված գործողութիւնը
 խոսեղու վայրկյանին ե կատարվում, բայը
 դրվում ե ներկա ժամանակ (կարգում եմ):
 Ներկա ժամանակը էադմվում ե եմ, ես, ե,
 եմք, եք, եմք՝ բայի դեմքը ցույց տվող ոժան-
 դակ բառերով, վորոնք կոչվում են ոժանդակ
 բայեր:

Ոժանդակ բայերը գրվում են առանձին:

4. Հետևյալ ձևով խոնարհեցեք սովորում եմ,
 գում եմ, նկարում եմ, պատում եմ, շաղարում եմ
 բայերը.

Ներկա ժամանակ

Յեզակի	Հոգնակի
կարգում եմ	կարգում ենք
կարդում ես	կարդում եք
կալոգում ե	կարգում են

5. Խոնարհեցե՛ք գալիս եմ, լալիս եմ բայերը հե-
 տեվյալ ձևով:

Ներկա ժամանակ

Յեզակի	Հոգնակի
տալիս եմ	տալիս ենք
տալիս ես	տալիս եք
տալիս ե	տալիս են

6. Նկարագրեցե՛ք ձեր դպրոցը, տունը, գյուղը, քա-
 դաքը... Սուարկաների նկարագրութիւնն մեջ բայերն ի՞նչ
 ժամանակ եք դնում:

7. Նկարագրեցե՛ք մի վորեմե արտագրական աշխա-
 տանք՝ ներկա ժամանակի բայեր գործածելով:

8. Գրեցե՛ք շարագրութիւն՝ «Ի՞նչպես եմ անցկաց-
 նում որս դպրոցում» վերնագրով:

9. Արտագրեցե՛ք բայերը. յերբ ե կատարվում վա-
 տանավորի մեջ գործածված բայերի ցույց տրված գոր-
 ծողութիւնը.

Մ Ե Ր Ո Ր Ո Վ Ե Ր Ի Գ

Յերեկ կայացավ մեր դասարանական ժողովը: Հայոց լեզվի դասատուն խոսեց մեր առաջագի-
մության մասին: Վորոշեցինք ոգնել թույլերին
և ավելի եւ բարձրացնել մեր ուսման վորակը:

Յեթե բայի ցույց տված դործողությունը
խոսելու վայրկյանից առաջ ե կատարվել՝
բայը գրվում ե անցյալ ժամանակ (կարդացի):

10. Հետեվյալ քառյակում գտեք բայերը և վորոշե-
ցեք նրանց ժամանակը, դեմքը և թիվը.

Գործարանի սուղիչը

Առավոտյան ժամի յոթին
գործարանի սուղիչն ուժգին
յերկար հնչեց,
բարձր կանչեց:

11. Մոտարհեցեք կարդացի, խաղացի, պատմեցի,
նկարագրեցի բայերը հետեվյալ ձեովով.

Անցյալ ժամանակ

Յեզակի

Հոգնակի

գնացի, գրեցի
գնացիր, գրեցիր
գնաց, գրեց

գնացին, գրեցին
գնացիք, գրեցիք
գնացին, գրեցին

12. Արտադրեցեք միայն բայերը. ստացեք նրանց
ժամանակը, դեմքը և թիվը.

Գարուն

Ձմեռն անցավ,	Փոփեց կակաչ
յեկավ դարուն,	սարի լանջին,
ձյունը հալվեց,	բազմեց մորին
լցվեց առուն:	թփի միջին:
Արեւ ծագեց	Ծառը թափիշ
արեւելքից,	զգեստ հագավ,
ծիլեր քաշեց	նորից քարին
գետնի տակից:	յերգեց կաքավ:
Տաք հարավից	Արոտ գնաց
յեկան հավքեր,	ծնած մաքին,
բուն հյուսեցին	տվեց անուշ
ընկեր-ընկեր:	կաթը ձագին:
Ծառը պտկեց,	Մուկ ու մողես,
տվեց բողբոջ,	միջատ, զեռուն
աղբյուրն հանեց	արեւն յեկան,
անուշ խոխով:	տեսան դարուն:

13. Մոտարհեցեք քու, հագա, մեկացա, անցա
բայերը հետեվյալ ձեովով.

Անցյալ ժամանակ

Յեզակի

Հոգնակի

յեկա, հեռացա
յեկար, հեռացար
յեկավ, հեռացավ

յեկան, հեռացան
յեկաք, հեռացաք
յեկան, հեռացան

14. Արտագրեցեք և բալերի վերեւը գրեցեք նրանց ժամանակը, դեմքը և թիվը.

Թռչնիկ

Թռչնիկը թռչում է: Թռչնիկը թռավ:
Թռչնիկը խաղում է: Թռչնիկը խաղաց:
Թռչնիկը յերգում է: Թռչնիկը յերգեց:

15. Ինչ ներդ նախագասություններ կազմեցեք աջ և ած վերջավորութուն ունեցող բառերով և գրի առեք հետեւյալ ձեւով.

Նրանք գնաց: Պնամ ապրանք:
ձայնը կարդաց: Կարդացած գիրք:

Հարցեր

1. Ինչ արավ. — գնաց, կարգաց:
2. Ինչպիսի ապրանք. — գնած ապրանք:

Այս վերջավորությունը ց-ով և գրվում բայի անցյալ ժամանակի յեզակի թվի յերրորդ գեմքում:

Ած վերջավորությունը ծ-ով և գրվում այն բառերում, փոքրեք լացում են և պատասխանում են ինչպիսի հարցին:

16. Այս ձեւերով ինչ ներդ ստացականներ գրեցեք.

Արաւշակուն

Արաւշա № 6 դպրոցի աշկոռ-
պից փառասունը քերական:

II խմբի աշակերտ
Քրարիկ ձակորջան

Մայրիկի 1-ին 1935 թ.

Արաւշակուն

Արաւշա փոսրի ցրիւից փան
որինակ «Արմուէր կանչ» թերթը
նշանակչանի անվան դպրոցի
III խմբի մանուկի լիպորթին հանչ
նելու համար: Կանոն Արաւշան

3/III 1935 թ.

Արաւշաւան

Արաւշա Վանականացիք գործա-
րանի գրաւարկդից իմ Վարդ Վար-
սեանի Աղապարի. Վարդ անախ-
աշխարհաւարքը՝ Մեկ եարջուր փառն
ոռւրի:

Վարդիկ Աղապար

20/III 1935 թ.

Ստացական գրվում է հետեւյալ ձեւով.

Նախ գրվում է վերնագիրը (Ստացական) տողի
մեջտեղում, ապա նոր տողից (մի քիչ խոր-
քից) գրվում է, թ. ումից է ստացված և ի՞նչ
է ստացված. հետո, յեթե պահանջվում է,
գրվում է նաև՝ ինչի՞ համար է ստացված:

Վերջում ձախ կողմում գրվում է ստացողի
անունը և ազգանունը, իսկ աջ կողմում նոր տո-
ղից՝ ամիսը, ամսաթիվը և տարին, յերբեմն նաև
տեղը (քաղաք, գյուղ):

17. Ստացարկեցեք բայերը. յ՞նքը են կատարվելու
որագրի մեջ գործածված բայերի ցույց տված գործողու-
թյունները.

Մեր որագրից

Շուտով մեր դասարանում լինելու յե ստու-
գողական աշխատանք: Մեզ տալու յեն ազատ շա-
րադրություն: Շարադրության նյութը մենք ենք
ընտրելու: Սմեն մի աշակերտ ինքն է կազմ յու
շարադրության ծրագիրը: Աշխատելու յենք մա-
քուր և կանոնավոր դրեր:

Յեթե բայի ցույց տված գործողությունը
խոսելու վայրկյանից հետո յե կատարվելու,
բայը գրվում է ապառնի ժամանակ (կար-
գալու յեմ):

Ապառնի ժամանակի յեմ, յես, յե, յենք, յե
յեն ոժանդակ բայերը նույնպես գրվում են
առանձին. ոժանդակ բայերում յ տառի ավե-
լանալու պատճառն այն է, վոր նախորդ բա-
ուր վերջանում է ձայնավորով (գնալու յեմ):

18. Ինքներդ վերեվի որագրի ձեւով գրեցեք ձեր դա-
սարանի ապագայում կատարելիք աշխատանքի մասին:

19. Խոնարհեցեք կարդալու յեմ, խաղալու յեմ, պա-
մելու յեմ, նկարագրելու յեմ բայերը հետեւյալ ձեւով.

Ապառնի ժամանակ

Յեզակի

Հոգնակի

գնալու յեմ	գրելու յեմ	գնալու յենք	գրելու յենք
գնալու յես	գրելու յես	գնալու յեմ	գրելու յեմ
գնալու յե	գրելու յե	գնալու յեն	գրելու յեն

20. Պատմեցեք փորելիս նյութ ներկա ժամանակով:

21. Նույնը պատմեցեք նախ՝ անցյալ և ապա՝ ապառնի ժամանակներով:

22. Յուրաքանչյուր բայն արտադրեցեք ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով, միայն յեղակի թվով և առաջին դեմքով:

Կառուցում եմ, բարեկամում եմ, աջակցում եմ, սովորում եմ, մասնակցում եմ, մըցում եմ, առաջադիմում եմ:

ՈՐԻՆԱԿ

Կառուցում եմ, կառուցեցի, կառուցելու լիմ:

23. Յուրջ ավեք բայերի ներկա, անցյալ և ապառնի ժամանակները ձեր կարգացած հոգվածներում:

24. Արտադրեցեք և ընդդժեցեք բայերը:

ՇՈՒՆՈՎ ԿԳԱՆ


ՇՈՒՆՈՎ ԿԳԱ
կանաչ դարուն,
սար ու ձորեր
կծաղկեն.
յետ կդառնան
նախշուն հավքեր,
գարնան գովքը
կերգեն:

ԲՈՒՆ ԿԶԼՆԵՆ
դաշտում, այգում,
ձվեր կածեն
բներում,
ձագ կհանեն
նախշուն, սիրուն
իրենց փափուկ
բներում:

Հարցեր

1. Ի՞նչ ժամանակ են ցույց տալիս ընդգծված բայերը:
2. Ո՞ժանդակ բայով, թե՞ առանց ո՞ժանդակ բայի յձն կազմված:
3. Ի՞նչ մասնիկ են ընդունել այդ բայերն սկզբից:

Բացի ո՞ժանդակ բայով կազմված ապառնի ժամանակից, կա և պարզ ձեով, փոքր կազմվում է առանց ո՞ժանդակ բայի: Ապառնի պարզ ձեով փրա դրված կ մասնիկը բային կպած է դրվում (կասեմ, կկարդամ):



25. Արտադրեցեք բայերի ապառնի ժամանակի պարզ ձևիները ներկա ժամանակ դարձնելով:

Լսիր, Եդիսարդ

Վերեւ Տեր խոսիք կերպա-
րեւեմ, կամբայնեւեմ բոլոր յերկրե-
րի պրոփետարներ յեղբայրական
Տիւրքիան գործը, լավ կտոմորեւեմ,
կարայքարեւեմ 17-րդ կուստեանագու-
մարի բոլոր վորոշումների կարար-
ման համար, Տեր ուժերի ներածիւն
չար աշխարհելով սոցիալիստա-
կան շինարարութեան բոլոր բնա-
գաւառներում, կամբայնեւեմ հա-
մաշխարհայիւն պիտներիայի Եա-
կարը, կամբայնեւեմ ինքերնա-
ցիոնալ կարք Տեր կոչեկրիւմե-
րի և ողակների ներսում: Կեր-
պարեւեմ շերիւնի ամանդները:

Պեհա և Կամակիս վերգը:

Ապարսում եւ պարսախանի:

Սեփար սեղմում եւ ին պիտնե-
րական քարիկը:

Քարեւմեքով քարեկանի

Սուրիկ

չեկրրվարի 6-ին 1934 թ.

Շերեւան

(Սպանիայի Մադրիդ քաղաքի պիտներ
Եղվարդ Միլանդոյին՝ պիտներ Սուրի ի
զբաժնում նամակի վերջին հատվածը)

26. Խոնարհեցեք կկարգամ, կխաղամ, կգրեմ, կպա-
սեմ բայերը հետեւյալ ձեւով:

Ա. պ ա ռ ն ի ժ ա մ ա ն ա կ (պարզ ձեւով)

Յեզակի

Հոգնակի

կխաղամ	կսովորեմ	կխաղանք	կսովորենք
կխաղաս	կսովորես	կխաղաք	կսովորեք
կխաղա	կսովորի	կխաղան	կսովորեն

27. Արտագրեցեք բայերը և դեմը գրեցեք բայի
ժամանակի, դեմքը և թիվը:

Լուսինը

Գիշերվա մթում
աբտերն են ծփում,
լուսինը վերելից
ժպտում ե նորից,
շողում ե կրկին
դեմքով ժպտերես
և նրա աբտերին
ասում ե կարծես.
— Կդա առավոտ,
կշողա արեւ,
կայցելեն ձեզ մոտ
կոլխոզ հնձվորներ:

ՈՐՆԱԿ

Ծփում են — ներկա ժամ. III դ. հոգն. Թիվ:

28. Արտագրեցեք և բայերի ապառնի պարզ ձևերի
կ մասնիկն ընդգծեցեք.

17 - րդ կուսհամագումարին Ստալինի
տված ղեկուցումից

... Խորհրդային Միության բանվոր դասակար-
գի Յեվրոպայի և Ասիայի բաղմաքանակ բարե-
կամները կաշխատեն խփել իրենց ճնշողներին,
վորոնք հանցագործ պատերազմ են պատրաստում
ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի դեմ:

Այս պատերազմը բուրժուազիայի համար ա-
մենավտանգավոր պատերազմն է լինելու: Նա
վտանգավոր կլինի վոչ միայն նրա համար, վոր



Խորհրդային Միության ժողովուրդները մահվան
գնով կպայքարեն հեղափոխության հաղթանակի
համար, նա ամենավտանգավորը կլինի բուր-
ժուազիայի համար նաև նրա համար, վոր պատե-
րազմը կլինի վոչ միայն ֆրոնտներում, այլ և
հակառակորդի թիկունքում:

ԲԱՅԻ ԲԱՑԱՍՏԿԱՆ ՁԵՎԸ

1. Խոնարհեցեք չեմ բացակայում, չեմ խոնարհում,
չեմ հուժում բաշերը ներկա, անցյալ և ապառնի ժամա-
նակներով, յեղակի և հոգնակի թվով, ներքեվում ցույց
տված ձեզով:

Ներկա
ժամանակ

Ա. հրդյոյ
ժամանակ

Ապրտոնի
ժամանակ

չեմ ուշանում

չուշացա

չեմ ուշանալու

չես ուշանում

չուշացար

չես ուշանալու

չի ուշանում

չուշացավ

չի ուշանալու

չենք ուշանում

չուշացանք

չենք ուշանալու

չեք ուշանում

չուշացաք

չեք ուշանալու

չեն ուշանում

չուշացան

չեն ուշանալու

Վարժություններ

Նրան ենք սպասում: Յես այդ բանը նոր եմ
իմանում: Դյուղը քաղաքից հեռու յե: Նա կարոտ
չի ոգնության:

6. Արտադրեցեք բալի բացասական ձեւերը.

Նա խկին բատրակ Աւյոշա Լազարեւի
պատմածից

Յես դարոց գնալու ժամանակ չունեյի և չգնա-
ցի յեր: Վաղ առավոտյան, յերբ մայրս դաշտ եր
գնում, գնում եյի և յես: Յեւ միայն այն ժամա-
նակ, յերբ գիշերն սկսվում եր կախվի, յես
անասունները գյուղն եյի քշում:

Մի անգամ գնացի կուլակ Վասիլի Տրունովի
մոտ փող ուզելու: Նա ինձ տուն չթողեց, վոնգեց:
Այդպես ել փող չտվին: Յես անասուններին արա-
ծացնում եյի արշալույսից մինչև մթնելը: Ստա-
նում եյի շատ չնչին վարձատրություն: Ամառ-
վա ընթացքում ամենաշատը յերեք ուրբի և
կես փութ հացահատիկ եյին տալիս:

ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅՈՒՆ ԶԵՎԸ

1. Արտադրեցեք ընդգծված բայերը.

1) Հոկտեմբեր

Հէյ, ջան հոկտեմբեր,

մեր ազատարար,

ցրի՛ր կայծերդ

առատ ու վառաբ:

Փոխի՛ր թեւերդ,

տուր ազատություն

ամբողջ աշխարհի

բանվոր, գյուղացուն:

Բացասական ձեւով խոնարհելիս ոժանդակ
բայն առաջ ե ընկնում և իր վերա յե առնում
բացասական մասնիկը. որինակ՝

ուշանում եմ, ուշանալու յեմ,

եմ ուշանում, չեմ ուշանալու:

Չ բացասական մասնիկը բայի հետ կպած
գրվում:

2. Ինքներդ կազմեցեք վորեւե բալի ներկալի պատ-
կերը՝ դրական և բացասական:

3. Ինքներդ կազմեցեք վորեւե բայի անցյալի պատ-
կերը՝ դրական և բացասական:

4. Ինքներդ կազմեցեք վորեւե բայի ապառնիլի
պատկերը՝ դրական և բացասական:

5. Արտադրեցեք՝ դրական բայերը բացասական դարձ-
նելով և, ընդհակառակը, բացասական բայերը՝ դրական:

2) Սեփանա լճի վրա

Այ լողա՛ հա, դե լողա՛,
առաջ գնա, իմ նավակ,
արե՛վ, արե՛վ շուշուկ
արծաթ ջրում առնորակ:
Թիակները շարժեցե՛ն՝
վճիռ ջրի յերեսին.
մարդարտի պես փայլեցե՛ք
բյուրեղները ծովային:

Հարցեր

1. Ինչո՞վ են տարբերվում ձեր արտադրած բայերի ձևերը ներկա, անցյալ և ապառնի ժամանակների բայերից:
2. Ի՞նչ են ցույց տալիս այդ բայերը:
3. Քանի՞ թիվ և դեմք ունեն:

Բայի այն ձևվը, վորը ցույց է տալիս, թե խոսողն իր խոսակցին հրամայում կամ դրդում է մի բան անելու, կոչվում է բայի հրամայական ձև:

Բայի հրամայական ձևին ունի յերկու թիվ և միայն մեկ դեմք:

Բայի հրամայական ձևի վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է դրվում (ցրի՛ր, շարժեցե՛ք. լողա՛, լողացե՛ք):

2. Արտադրեցե՛ք բայի հրամայական ձևերն իրենց վրա դրվող անբաժան լրացումներով:

1) Շախտյորին

Խփի՛ր մուրճդ՝ համառ, ուժգին,
թող դղրդա՛ շախտի խորքում,
քանդի՛ր ուժգին կուրծքը ժայռի,
առաջ գնա՛ վեհ ու խնդուն:

2) Մայիս

Շամփա տվե՛ք, սար ու զաշտի՛ր,
ճամփա բացե՛ք մեր հյուրին.
Նա բերում է ձագեր, թիթեռ,
նախշուն որեր մեր յերկրին:

Յեթե բայի հրամայական ձևին իր վրա դրվող անբաժան լրացում ունի, շեշտը դրվում է լրացումի վրա (առաջ գնա՛):

3. Արտադրեցե՛ք հրամայական ձևերի յեզակի թիվը հոգնակի դարձնելով:

Լեզուն գնե՛ր

Սմրացրու խորհրդային յերկրի պաշտպանությունը: Որինա՛կ վերցրու հարվածայինից՝ վերացրո՛ւ ճեղքվածքը: Պատրաստի՛ր դասդ՝ Բարձրացրո՛ւ ուսման փորակը:

4. Արտադրեցե՛ք հրամայական ձևերի հոգնակի թիվը յեզակի դարձնելով:

Առողջապահական կանոններ

Պահպանեցեք մաքրութիւն: Կոտորեցեք ճան-
ճերին: Ողափոխեցեք սենյակը: Հետեւեցեք ձեր
առողջութեան:

5. Գտեք այս շարադի բառերը:

Շարադ

Յերեք տառից բաղկացած,
գտեք ծանոթ մի չորս բառ,
վոր յերբ կարդաք և տառով,
ստացվի անուն գոյական.
ն-ն փոխեցեք բ տառի,
նշանուտական բայ ստանաք,
բայց յերբ փոխեք բ-ն բ-ի,
անունս դառնա անտիպան.
բ-ն ել փոխեք, և գրեք,
կստանաք մի ուրիշ բայ:

6. Ի՞նչ տարբերութիւն կա ձախ և աջ սյունակ-
ների նախադասութիւնների մեջ:

Պարապիր լուսավոր
սենյակում:
Նստած կարդա:
Խոսիր հասկացածդ
հարցերի մասին:
Խաղա՛ բազում, բայց
ողում:

Մի՛ պարապիր մութ
սենյակում:
Պառկած մի՛ կարդա:
Մի՛ խոսիր չհասկացածդ
հարցերի մասին:
Մի՛ խաղա զատարա-
նում:

Հրամայական բայի այն ձևը, վոր ցույց
ե տալիս, վոր խոսողը խոսակցին հրամայում
ե մի բան չանել, կոչվում ե արգելական հրա-
մայական:

Արգելական հրամայականի շեշտը դրվում
ե արգելական մի բառի ձայնավորի վրա (մի՛
պատմի, մի՛ գնա):

7. Արտադրեցեք նախորդ դասի աջ սյունակի ար-
գելական հրամայական բառերը՝ հոգնակի դարձեալ:

8. Կազմեցեք կարգապահական կանոններ՝ բայերի
հրամայական ձևներով:

9. Գրեցեք պրակտաներ՝ արգելական հրամայական
բայերով:

ԲԱՅԻ ԱՆՈՐՈՇ ԶԵՎԸ

1. Արտադրեցեք այս պայմանագրից այն բառերը,
վորնք պատասխանում են ի՞նչ անել հարցին.

Առջնորդական պայմանագիր

մենք, մշակյալի անվան դրս
րոցի III խմբի սովորողներս, ի
բար հետ կնքում ենք պայմանա-
գիր հետեւյալ կետերով.

չուշանալ և չբաշակայել գա-
ւերից,

կանոնավոր կարարել գրավոր
աշխատանքները,

դասերը պարբարաւորած և մաքուր
գալ դպրոց,

ոգնել թուշերին,

դասի ժամանակ լինել ուշադիր
և լսել դասաւորումներին,

դասամիջոցներին դասարանից
դուրս գալ և ողանցիք բանալ,

պահպանել դպրոցական գույքը,

բաժանորդագրուել «Այիւններ-
կան»-ին,

պայմանագիրն արուգել յուրա-
վանչյուր ամսի վերջին:

Բայի այն ձեւը, լորը պատասխանում է
ինչ անել հարցին, կոչվում է բայի անոտե ձեւ.
որինակ՝ կարդար, գրեւ

2. Արտադրեցեք բայի անոտե ձեւերը.

Սոցմըցման անհատական
պայմանագիր

Շահում յանի անվան դպրոցի յերրորդ դաս-
րանի աշակերտ Ամալիա Շիրինյանս սոցմըցման
պայմանագիր եմ կնքում մայրիկիս հետ. պար-
տավորվում եմ կատարել հետեւյալ կետերը.

ժամանակին լինել դպրոցում,

պատրաստել դասերս և ժամանակին քնել

պահպանել դպրոցական գույքը,

դպրոցում լինել կարգապահ աշակերտ,

կատարել դասատուներին առաժները,

մաքուր պահել զրքերս, տետրակներս

և շորերս,

տանը լսել ծնողներին,

Յեւ, Վարդանուշ Շիրինյանս, վորպես Ամա-
լիայի մայր, պարտավորվում եմ.

հետեւել Ամալիայի դասերին,

լավ խնամել և կերակրել

մաքուր ուղարկել դպրոց,

կատարել դպրոցի բոլոր պահանջները,

գնել բնութեցանության զրքեր,

ամիսը մի անգամ տանել կինո,

գնել մանկական թատրոնի արձնոմենտ,

վերցնել փոխառության տոմս,

Ամալիայի համար տանը կազմակերպել ան-
կյուն:

3. Կազմեցեք և գրի առեք լողուններ բայի անո-
րոշ ձևերով ուսման վորակի բարձրացման, գիտակցա-
կան կարգապահութիւն ամրացման և ընդհանրապէս հար-
վածային աշակերտի պարտականութիւնների վերաբե-
րյալ:

ՈՐԻՆԱԿ

Մեր առջեւ դրված ե յերեք խնդիր. առաջինը՝
սովորել, յերկրորդը՝ սովորել և յերրորդը՝ սովորել:

4. Արտադրեցեք բայի անորոշ ձևերը:

Մ Ո Պ Ր - ի Պ ա տ ա ն ի Բ ա ր ե կ ա մ ն ե ռ ի
խ մ բ ա կ ն ե ռ .

Մ Ո Պ Ր - ի Պ ա տ ա ն ի Բ ա ր ե կ ա մ ն ե ռ ի աշխատանքի
բովանդակութիւնն ե՝ 1) անցկացնել գրույցներ
ինտերնացիոնալ թեմաների շուրջը, 2) կազմա-
կերպել մոպրական գրականութեան կոլեկտիվ ըն-
թերցում, 3) սարքել ինտերնացիոնալ յերեկոներ
և առափոռներ, 4) մասնակցել հեղափոխական տո-
ներին, 5) կազմակերպել ինտերնացիոնալ ան-
կյուններ, 6) պիտներներին և դպրոցականներին
մասնակից դարձնել Մ Ո Պ Ր - ի անցկացրած բո-
լոր կամպանիաներին, ցույցերին, միտինգներին,
7) նամակագրութիւն հաստատել արտասահմանի
Մ Ո Պ Ր - ի մանկատների և այլն բանտերի քաղկա-
լանափորների հետ, վորոնց շեֆութիւնը վերցրել
ե Մ Ո Պ Ր - ի տեղական կազմակերպութիւնը, 8) հա-

վաքել գրամական միջոցներ կապիտալիստական
յերկրների քաղկալանափորներին ոգնելու համար,
9) տարածել մոպրական գրականութիւն, 10) ի-
րենց ծնողներին բացատրել Մ Ո Պ Ր - ի նշանակու-
թիւնը:

5. Պատի թերթի համար մի հոդված գրեցեք ձեր
խմբի ուսման հարվածայինների մասին. նախ ընտրեցեք
վերնագիրը. աշխատեցեք, վոր այն լինի կարճ և պարզ.
ապա կազմեցեք հոդվածի պլանը, թե նախ ինչ պիտի
գրեք, հետո ինչ և ինչպէս պետք ե վերջացնեք. յերբ
պլանով եք գրում՝ վոր մի բան բաց չեք թողնում և ա-
վելորդ կրկնութիւններ չեք անում:

6. Հետեւյալ թղթակցութիւնը բաժանեցեք մասերի՝
համաձայն տրված պլանի կետերի:

Մարտնոս եւսի
«Միտեր կարւ»-ը

Միտիսի Գորկու անւան III
խմբի աշակերտները սիրում եւս
կարդալ Մեր սոցիալիստական շի-
նարարութեան, պիտներների հա-
սարակական աշխատանքների և
ուսման հարվածայինների հազո-
ղութումների մասին:

Այդ նպատակով էլ Տեր խնդիր
խորհուրդը փորձել է բոլոր աշա-
կերպներին բաժանորդագրել
«Ափոներ կանչ»-ին:

Վերջ ամբողջ խմբով խնայո-
ղական դրամարկի ախճողարու-
ներ ենթ դարչել և ամսական
խնայում ենթ թերթի բաժանորդա-
գիր:

Թղթակցութեան պլանը

Խնչ են սիրում III դասարանի աշակերտները:
Դրա համար ել Խնչ է փորձել III դասարանի
խորհուրդը:

Ինչպէս են խնայում թերթի բաժանորդագիրները:

VII. ՆԱԽԱԴԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ

1. Արտագրեցեք և ընդգծեցեք մեկ գծով՝ գոտ-
կանները, յերկու գծով՝ ածականները, ալիքաձևան գծով՝
բայերը:

Վարժու թյուններ

Ծագում է արեւի: Առունները խոխոջում են:
Ծառերը բողբոջ են արձակում: Մոնայ աշուն
սկսվեց: Պայծառ աստղերը փայլում են յերկնքում:
Կիր սեղանատափներով փորձում է խոտը: Կար-
միր զրոշակները ծածանվում են փողոցում: Առա-
ջավոր բանփորները բարձրացվում են կարմիր
տախտակին:

Ամեն մի առանձին վերցրած բառ կոչ-
վում է խոսքի մաս:

Խոսքի մասեր են՝ գոյականը, ածականը,
բայը, զերանունը և այլն:

2. Վերլուծեցեք հետևյալ նախադասութունները:

Թխագույն կիւն ձուռն ածում է ուրիշ թրո-
շունների բների մեջ:

Մոխրագույն նապաստակը ցողապատ մար-
գագեանում հյութալի խոտ է փորձում:

Թխաթեյ արծիվը իր բունը շինում է ամե-
նաբարձր կաղնիների գազաթներին:

Երբազգաց չղջիկը հաջողութեամբ կոտորում
է զիշերային վնասակար միջատներին:

ՈՐԻՆԱԿ

Կարմիր – ածական:

զրոշակները – գոյական, հասարակ անուն, հոգ

նակի թիվ, փորձող հոգով, ուղղական հոլով, 1 հոլովում:

ծածանվում են — բայ, ներկա ժամանակ, հոգ-
նակի թիվ, յերրորդ զեմք:

փող, ցում — գոյական, հասարակ անուն, հոգնակի
թիվ, ներգոյական հոլով, 1 հոլովում:

3. Վերլուծեցեք հետեվի ախաղասությունները:

Ուսումնական տարին վերջացավ:

Մեր դպրոցը հանդես կազմակերպեց:

Լավագույն հարվածայինները պարգևատրե-
վեցին:

Մեր խումբը մրցանակ ստացավ:

Դաստիարակներն աշակերտներին վկայական-
ներ բաժանեցին:

4. Ինքներդ ասացեք մի քանի ախաղասություն-
ներ, փորձեց մեջ խոսքի մասերը լինեն գոյական, ածա-
կան, բայ և ապա վերլուծեցեք յերկրորդ դասի ձե-
վով:

5. Բաց արեք այս դասագրքի բովանդակությունը:
Քանի հիմնական բաժին ենք անցել մինչև այժմ: Քանի
մասի յե բաժանվում ախաղասության անդամները, իսկ
քանի խոսքի մասեր ենք անցել մինչև այժմ. վճիռ եղում
ե գտնվում գոյականը և քանի գլխի յե բաժանվում. վճիռ
եղում ե գտնվում բայը և քանի գլխի յե բաժանվում:

6. Արտագրեցեք և բառերի վերելը գրեցեք խոսքի
մասերի սկզբնատառերը (գ. բ. ած. անձ. դ.).

Արեւիկ Կոչակ

Այսօր մեր դպրոցում սովո-
րական դասերը վերջացան: Ըն-
քով կակալեն քարեկան արու-
գունները: Մի քանի որից կլե-
րադառնամ չեզ մոք և միասին
կհանգստանանք մեր հովանուն
լեռներում: Մենք կբարչքանանք
ծաղկավեր բյուրները, կհանք աղ-
բյուրների գլխան գրերը, կծծենք
լեռնային քար՝ ողբ:

Առաջ՝ արաչեք եմ լավ և զար-
լավ գնահատականներ:

Ընդունիր սիրալիր բարեվ-
ներս և գերեմագին համբույրներս:

Քո յեղբայր Արեւիկան

մայիսի 15-ին 1934 թ.

Ջերմիկան

7. Արտադրեցեք այս նամակից բոլորը ներքեվում տրված համապատասխան սյուեակներում և խնքներդ լրացրեք այդ բայի բոլոր ձևները.

Ս ի ը ե լ ի Գ Ր Ի Ղ Ո Ր

Հայրդ առողջանում ես Գիշերները հանգիստ քնում ես Այժմ այլևս փառնդ չկա: Մի քանի որից հետո նա նորից կսկսի իր աշխատանքին գնար Յերեվակայել չես կարող, թե փորքան տանջվեցի այս յերկու շաբաթվա ընթացքում: Առաջին շաբաթը յես համարյա անքուն անցկացրի Այլևս չեմ խոսում հոգեկան տանջանքների մասին: Նամակներ գրի՛ր, սիրելիս, մի ծուլանա: Ի՞նչպես են գնում դասերդ:

Բարեկյանք և համբույրներ բոլորիցս

Քո մայր Արփենիկ

Մայիսի 17-ին 1934 թ.

Սեվան

Անորոշ ձևով	Ներկա	Անցյալ	Ապագա- նի	Ապագանի պարզ ձևով	Հրամա- յական ձևով	Արգե- լական ձևով

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Նախքան անձանոթ դժվար գրվող բառը գրելը

ճայեցեմ ուղղագրական բառարանը

(Չմոռանաք այբբենական կարգը՝ ա բ գ դ ե զ ը
թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո ու չ պ ջ ռ ս վ
տ ր ց փ ք ֆ)

Արգառ	անդամ	Արագած
աղան	անկյուն	աբեվելք
աղաւթ	անձրեւ	արեվմուտք
Աղբերջան	անորոշ	Արիստակես
աերուլան	աշակերատունի	արծիվ
Աթաբեկ	աշխատանք	արհամարհել
ածուխ	աշխատակ	արյուն
ականջ	Այտ	արշալույս
անազին	ապակի	Արուսյակ
աղյուս	ապանով	արջ
աղջիկ	ապանի	Արտավազդ
ամպ	առայժմ	առամ
այբուրեն	առանձին	աքաղաղ
այգի	առանցք	
այդտեղ	առաջագիմ	Բագու
այծ	առաջնորդ	բաղ
այնտեղ	առավուտ	բաժանորդ
այտ (բուլ)	առարկա	բակ
Անահիտ	առյուծ	բան
անասնաբույժ	ավագ	բաղաձայն
անգամ		բաղնիք

բանհոն
բամ բակ
բանակ
բանաստեղծ
բանջար
բառաչ
բառաբան
բարակ
բարդ
բարկանալ
բարձ
բացակա
բացականչել
բացատրել
բեռնավորել
բերդ
բերք
բթամատ
բժիշկ
բնակիչ
բոբիկ
բուլղիվիկ
բուլղոլին
բութ
բութակ
բութրդ
բութուա

Գաբրիել
գագաթ
Գագիկ

գաղանիք
Գալանե
գանգ
գանգուր
գանգրահեր
գառ
Գարեգին

գդալ
գդակ
գեղեցիկ
Գեվորգ
գերանդի
գիծ
գիտենալ
գիտություն
գիրկ (սաբդու)
գիրք (կադա-
լու)

գլխաբաց
գծել
գյուղ
գյուղատնտես

գնացք
գնդակ
գնդասեղ
գոյական
գոռալ

գոտի
գործ
գործադիր
գործադուլ

գործադուրկ
գործածել
գործաբան
գործիական
գործիք
գորշ
գորտ

գութան
գութլալ
Գութրգեն
գտնել
գրագետ
գրավաճառ
Գրիգոր

գրիչ
գրչահատ
գրպան
գրվածք
գրքույկ
գցել

դադար
դադգյահ
դահլիճ
դանակ
դանդաղաշարժ
Դանիել
դաշտ, գաշտա յին
դաննալ
դասագիրք
դասակարգ

դասընկեր
դաստիարակ
Դավիթ
դատարկ
դարակ
դարբին
դարձյալ
դրում
դեկտեմբեր
դեղձանիկ
դեպք
դերձակ
դիագրամ
դիակ
դիմագուրկ
դիմաց
դիտել
դուռ
դպրոց
դրոշակ

Եկեղեցականու-
թյուն
Եքսկուրսիա

գավթուղ
գանգ
գարգանալ, գար-
գացում

գարդ
գարլիներ

զգալ
զգայարան
զգաստ
զգեստ
զգույշ
զեկուցում
զուգընթաց
զույգ
զտել
զրահ
զրկանք
զրույց

ընդարձակ
ընդգծել
ընդհանուր
ընդմիջել
ընդունակ
ընդունել
ընթացիկ
ընթացք
ընթերցանու-
թյուն

ընթերել
ընկեր
ընկույզ
ընտանի
ընտիր

Թաղեղոս
թաթ
Թանաք (գրքի լուս)

Թանկագին
Թանկարան
Թաշխինակ
Թառամել
Թատրոն
Թափվել
Թեթիվ
Թելադրել
Թեկ
Թերթ
Թթու
Թիթեռ
Թղթակցել
Թմբուկ
Թնդանոթ
Թշնամի
Թոկ
Թուխս
Թուղթ
Թուփ
Թոքախտ
Թուչել
Թուչուն, Թուչուն-
ներ

Ֆամոցույց
Ճալո
ժողովուրդ
ժպիտ
ժլաշան

իւրեմ	խլուրդ	ծոծրակ
իջնել	խնունջ	ծրագիր
իսկուշն	խճուղի	ծրար
իսպառ	խմբակ	
	խնդիր	կազդուրվել
լայն	խնձոր	կազմակերպու-
լանջ	խոզանակ	թյուն
լեռ	խոհարար	կազմվածք
լիակատար	խոնարհ	կաթաս
լիճ	խոշոր	կաթված
լիովին	խոսք	կալվածատի-
լորի	խոտ	րուհի
լուծել	խորամանկ	կախադան
լույս (լուսա-	խորանարդ	կակաչ
վոր)	խորթ	կաղամբ
լուռ (անձայն)	խորհուրդ	կամուրջ
լուսամուտ	խորհրդային	կայծակ
լուսանցք	խրախուսանք	կանաչ, կանա-
լուր (սեղեկու-	խրխնջալ	չափեա
թյուն)	խիլել	կանգնել
լուրջ		կառուչուկ
լուցիկ	ուգել	կաշաղակ
	ածկ	կապերտ
խանգարել	անձադ	կապույտ
խառնուրդ	ծանրաբեռնել	կառք (կտու-
խարույկ	ծառուղի-	պան)
խեղդել	ծիծեռնակ	կասկած
խեցեւորին	ծծան	կատու
խիճ	ծղատ	կարազ
խիստ	ծնոտ	կարապետ
խիտ	ծնունդ	կալազ (կարգա-

պանոթյուն	կոտայերաւիմ	համեմատ
արհ)	կոպեկ	համերգ
կարգալ	կոնստանդին	Հայաստան
կարճ	կով	հայոց
կարմիր բանա-	կուրծք	հայտնել
կային	կուռնկ	հայցական
	կտափատ	հանգիտ
կեղծ	կտրիճ (խց)	հանդես
կենդանի	կտրիչ (կսրուղ,	հանդիպել
կենտ	կսրիյ տսամ)	հանկարծ
կենտրոն	կտրուկ	հանձն առնել
կեռաս	կրկնել	հանձնարարու-
կեցցե	կրճատ	թյուն
կիսամյակ	կրիտ	հանցանք
կիրճ	կրունկ	հաշտ
կծու	կրասեր	հաջել
կլզի		հաջող
կճեպ	հագնել	հաջորդ
կմախք	հաղթել	հասկ
կնիք (կնքել)	հաճախ	հաստ
կոյեղիա	Համազասպ	հասցե
կոյեկտիվ	համազարկ	հավատարիմ
կոյեկցիա	համակրանք	հատիկ
կոյունտեսու-	համաձայն	հարված
թյուն	համաշխարհա-	հարբուխ
կոկորդ	յին	հարգ (դարձան)
կոկորդիլոս		հարթ
կողմնացույց	համառոտ	հարկ
կողպեք	համարձակ	հարկ
կոմյերիաւիան	համարյա	հարյուր
կոմունա	համբերել	հարվածային
կոշտ	համբույց	հեծանիվ

հեծելադոր	հորթ (կովի	ճարպ
հեղափոխու-	ձագ)	ճարպիկ
թյուն	հրահանգ	ճեղքվածք
հեղեղ	հրամայական	ճիշտ
հեռագիր	հրանտ	ճիշ
հետզհետե	հրաչյա	ճիպոտ
հեքիաթ	հրապարակ	ճնճողուկ
հիանալ	հրաքան	ճորտ
հինգ	հրդեհաշեջ	ճուտ
հիշել	հրյա	ճպուռ
հիվանդ		
հմուտ	ձախ	մահնակալ
հյուսթ	ձեռնոց	մայել
հյուսիս	ձի	մայիս
հնարագետ	ձկնորս	մանգաղ
հնգամյակ	ձյուն	մանկապարտեզ
հնձել	ձնծաղիկ	մառախուղ
հնչյուն (պարգ	ձրի	մասշտաբ
ձայն)		մատիտ
հնչուն (հնչող,	ղեկ	մատչելի
ձայն հանող)	ղողանջել	Մարգարիտ
հողի		մարդ (մարդ-
հողնակի	հազար	կաց)
հողնել	ճակնդեղ	Մարիամ
հող	ճահիճ	մարտ (ասիս,
հողված	ճամբար	կռիվ)
հոկտեմբեր	ճամպուռ	մեծատառ
հոսել	ճանաչել	մեղր
հոտ (հոսած)	ճանապարհ	Մեսրոպ
հորդ (վարար)	ճանճ	մերկանալ
	ճառագայթ	միակ

միայն	յերեկույթ	շարադրու-
միլիցիոներ	յերեսուն	թյուն
միմիայն	յերկինք	շարքացան
մյակել	յերեսսբիչ	շեշտ
մկրատ	յերկրագործ	շինարարու-
մյուս	յերկրաշարժ	թյուն
մոտիկ	յերրորդ	շղթա
մութ	յոթ	շնորհակալ
մուտք	յուղ	շրուկ
մութ		շյակ
մութալ	նավթ	շոշափել
մրթյալ	նախագահ	շուն
մրջյուն	նախագահու-	շտապ
մրցանակ	թյուն	շրթունք
	նամակ	
յեզակի	նայել	ոգնել
յեզանակ	նախ	ոգոստոս
յեղբայր	նարինջ	ող
յեղան	ներդոյական	ոժանդակել
յեղյամ	ներքնակ	ոձ
յեղջերու	նժույգ	ոձիք
յեղջուր	նկարչույթյուն	որակաբե
յենթակա	նյարդ	որապահ
յեռանդ	նյույթ	
յերամ	նոյեմբեր	ոթսուն
յերաշտ	նորեկ	ուղղագրու-
յերբ	նորոգել	թյուն
յերբ	նուրբ	ուղղական
յերեկ (անցյալ	նվագ	ուղղակի
որբ)		ուղղանկյուն
յերեկո	նապիկ	ուղտ

ուսկան
ուսուցիչ
ուրագ

չառանքի
չղջիկ
չմուշկ
չոր
չորորդ
չիտի

պահանջ
պահեստ
պայթիկ
պայծառ
պայման
պայտակ
պատրաստ
պարտաճանաչ
պիկոկ
պիտներ
պղպեղ
պտուղ
պտույտ

ջինջ
ջութակ
ջրաղաց
ջրվեժ

նազնական

ռետին
ռութի
ռումբ

սագ
սանր
սառն
Սարգիս
սարդ
սենյակ
սերմագալիչ
սեպտեմբեր

սկիզբ
սկյուռ
սմբակ
Սմբատ
սյուն
սողալ
սողիալիստա-
կան

սուրճ
սպիտակ
սպունգ
ստամոքս
ստանալ
ստացական
Ստեփան
ստիպել
ստորոգյալ
ստույգ

վագր

վաղգեն
վաթսուկ
վախճան
վահագ
վաղ
վախնակ
վալրիյան
վաչագան
վարագույր
վարարել
վարդ
վարդան
վարդանուշ
վարդուհի
վարչություն
վարունգ
վերջակետ
վորդ
վորթ (խաղողի
բույս)

վորոտ
վորպեսզի
վատահ

սախսակ
տարեգարձ
տարիք
տարրական
տաք
տգեղ
տգետ

տետրակ
Տիգրան
տրական
տրակտոր
Տրդատ

րոպե
րոպեյական

ցած
ցածր
ցայտուն
ցանկ
ցանց
ցատկել
ցերեկ
ցնցուղ
ցուրտ (ցըր-
տում է)
ցուցահանդես

փաթեթ
փախչել
փակ
փակուղի
փայլակ
փայտ
փայտիկ
փարոս
փափուկ
փեթակ
փեղկ
փետուր
փետրվար
փոթորիկ
փողկապ
փոստ
փորձ
փոցիս
փունջ
փչել

փրփուր
փաղհան
քաղցր
քայլվածք
քանակ
քանդել
քանոն
քառակուսի
քառյակ
քառորդ
քարտեզ
քարտուղար
քերականու-
թյուն
քրտինք
Փաբրիկ
Փիղկուլտուրա
Փլորա
Փուրղոն



Ս. ՆՍԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

62

- I. ՅԵՆԹԱԿԱՆ ՅԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԸ ՆՍԽԱ-
ԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 3
- II. ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆՍԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 12

Բ. ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

- III. ԳՈՅԱԿԱՆ 25
- Հատուկ և հասարակ անուան 34
- Գոյականների թիվը 43
- Գոյականների փոփոխող հոգը 47
- Գոյականների հոլովները 54
- Գոյականների I, II և III հոլովումները 71
- IV. ԱԾԱԿԱՆ 81
- V. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ 91
- VI. ԲԱՅ 98
- Բայի դեմքը և թիվը 101
- Բայի ժամանակները՝ ներկա, անցյալ
 և ապառնի 107
- Բայի բացասական ձևը 121
- Բայի հրամայական ձևը 123
- Բայի անորոշ ձևը 127
- VII. ՆՍԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
 ԸՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ 132

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 137



ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ. 20 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 30 ԿՈՊ.



М. ГАСПАРЯН
АРМЯНСКИЙ ЯЗЫК

(грамматика, правописание, развитие речи)

Часть II

Для 2-й группы начальной школы

Гиз. ССР Армени, Эривань, 1934